ԳԱՅԱՆԵ ՏՈՆՈՅԱՆ

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

21-րդ դարն իր հետ բերեց մի շարք խնդիրներ՝ կապված կրթության բնագավառի հետ: Աշխարհի շատ երկրներ, ընդհանրացնելով մանկավարժական մտքի գիտահետազոտական աշխատանքների արդյունքները, ամրակայում են դիդակտիկայի հիմնադրույթները: Հայաստանն, օրինակ, հիմնադրույթների թվում առանձնացնում է փոխազդեցական (ինտերակտիվ) ուսուցումը, կիրառական ուղղվածության ուժեղացումը, իմացական գործունեության խթանումը: Փոխազդեցական ուսուցման ժամանակ բոլոր մասնակիցները գործնականորեն ընդգրկվում են ակտիվ ճանաչողական գործընթացում:

Ուսուցման փոխազդեցական մեթոդները թույլ են տալիս ուսումնառողի համար անընդհատ նորացվող դաստիարակչական և ուսումնական իրադրությունների այնպիսի պայմաններ ստեղծել, որտեղ իրականանում է նրա անձի ամբողջական ներգրավվումը գործունեության և փոխադարձ շփման գործընթացում, որը ակտիվացնում է նրա ներքին կարողությունները՝ դրանով իսկ նպաստելով ներքին հասունացմանը: Կան մեթոդներ, որոնք ընդունում է առաջադեմ աշխարհի ողջ մանկավարժական միտքը: Դրանցից են՝ համագործակցային ուսուցումը, անձնակողմնորոշիչ ուսուցումը, մտագրոհը:

Դիտարկենք վերոհիշյալ մեթոդները և նրանց կիրառումը ուսուցողական գործընթացում: Ուսանողների ինքնուրույն և ստեղծագործական մտածողության զարգացման խնդիրն այժմ դարձել է ամենաառաջնահերթ ուսումնասիրվող հարցերից մեկը: Գործունեության նկատմամբ ստեղծագործական մոտեցում կարելի է ձևավորել և զարգացնել միայն՝ ուսանողներին պարբերաբար մասնակից դարձնելով պրպտողական բնույթի աշխատանքներին, կանգնեցնելով նրանց հետզհետև բարդացող ճանաչողական խնդիրների լուծման անհրաժեշտության առջև: Ժամանակակից հոգեբանությունը և դիդակտիկան բացահայտել են խնդիրների մեծ դերը ուսուցման մեջ՝ որպես ուսանողների մտավոր լարվածության, ճանաչողական, գործնական ակտիվության բարձրացման, հետաքրքրության ուժեղացման կարևոր գործոններից մեկը: Խնդիրների լուծումը ուսանողներից միշտ պահանջում է յուրացրածի ոչ թե պարզ բովանդակային վերարտադրություն, այլ նորացված արտահայտչամիջոցների կիրառում: Խնդիրների առաջադրումը ուսանողների մտածողության առաջացման անհրաժեշտ պայման է:

Մտածողությունը պատմականորեն առաջ է եկել մարդու գործունեության ընթացքում՝ կյանքի կողմից առաջադրված տարբեր խնդիրներ լուծելու անհրաժեշտությունից: Նպատակին հասնելու ճանապարհին ծագած դժվարությունները առաջացնում են մտքի ակտիվ աշխատանք: Մարդը ընբռնում է խնդիրը, ապա փնտրում լուծման ուղիներ, դժվարությունները հաղթահարելու միջոցներ: Ամեն մի ճանաչողական կամ գործնական խնդրի հիմքում ընկած է հակասություն երկու իրողությունների՝ այն ինչ-որ կա և այն, ինչին որ մարդը ցանկանում է հասնել: Այդ հակասություններն էլ հենց միտքը մղում են առաջ: Խթանում լուծման պրպտումները: Հոգեբանությունը պնդում է, որ ամեն մի արդյունավետ մտածողական աշխատանք հենց խնդրի լուծում է: Հարկ է լինում այն փնտրել ինքնուրույնաբար՝օգտվելով հարցի ու պատասխանի միջև եղած տարբեր միջանկյալ օղակներից: Սակայն խնդիրը ոչ ամեն դեպքում է զարգացնում ստեղծագործական մտածողությունը: Եթե խնդիրը լուծվում է դասավանդողի կամ դասագրքի հեղինակի պատրաստի օրինակով, ապա նրա լուծումը ուսանողներից ինքնուրույն ստեղծագործական մտածողություն չի պահանջում: Ուսանողի գործունեությունը նման դեպքում կրում է վերարտադրողական բնույթ: Այլ բան է, երբ ուսանողին լուծման պատրաստի օրինակ չի տրվում, և նա ինքնուրույն պետք է գտնի լուծման ուղին: Այս դեպքում խնդրի լուծումը «հրահրում» է ուսանողի ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Ուստի բուհում պետք է ուսուցանել խնդիրների լուծման այնպիսի մեթոդներ և հնարքներ, որոնք այսօր համագործակցային ուսուցման բովանդակությունն են կազմում, որպեսզի ուսանողը պատրաստ լինի կյանքում նոր խնդիրների ինքնուրույն լուծմանը: Համագործակցային ուսուցումը ներկայացված է որպես ուսուցման մի արդյունավետ միջոց, որը մարդկանց համագործակցության սկզբունքներով ապրելու հնարավորություններ է ընձեռում: Համագործակցությունը խթանում է առաջադիմությունը: Հոգեբանների հետազոտությունները ցույց են տալիս, որ պրպտողական խնդիրների լուծումը այս կամ այն առարկայի գիտելիքների տիրապետման միջոցներից մեկն է և նպաստում է ճանաչողական ինքնուրույնության և ստեղծագործական մտածողության զարգացմանը: Համագործակցությունն ուսուցման գործընթացը դարձնում է առավել գրավիչ և հետաքրքրական՝ բոլոր սովորողների համար ապահովելով մասնակցության հնարավորություններ: Այն թույլ է տալիս դասավանդողին՝ լուծելու ավանդական մեթոդներով իրականացվող կամ գրեթե անհնար թվացող՝ բոլոր սովորողների ակտիվ մասնակցության ապահովման հարցը: Լսարանը դառնում է ընդհանուր նպատակներ ունեցող փոքր խմբերի հավաքականություն, որտեղ հեշտությամբ կարելի է լուծել ամենաբարդ մանկավարժահոգեբանական խնդիրները՝ անկախ առարկայից և թեմայից: Սովորողներն իրենց ավելի ազատ

և անկաշկանդ են զգում փոքր համագործակցային խմբերում աշխատելիս, որտեղ ստանում են ինքնադրսևորման լայն հնարավորություններ: Նրանք համատեղ ջանքերով առավել հեշտությամբ են ընկալում նոր նյութը՝ յուրացնելով գիտելիքը և կիրառելով այն: Մեր օրերում բուհը չի կարող ղեկավարվել ուսանողներին գերազանցապես փաստական նյութեր հաղորդելով: Անհրաժեշտ է հոգ տանել սովորողների տրամաբանական մտածողության ու վերացական ըմբռնումների զարգացման համար: Այս առումով համագործակցային ուսուցումը դասավանդողին առաջադրում է որակապես նոր խնդիրներ՝ կապված ուսուցման նպատակների հետ: Այսօր գիտելիքի մատուցմանն ու վերարտադրմանը փոխարինելու են գալիս ուսուցման գործընթացի կառավարման և սովորողների համագործակցային հմտությունների ձևավորման նոր մոտեցումներ: Խիստ սոցիալական են դառնում ինչ և ինչպես սովորեցնել հարցերը: Ակնհայտ է, որ ուսուցման նոր մեթոդներ սովորելու լավագույն ճանապարհը հենց մեթոդի միջոցով սովորելն է:

Ինքնուրույն աշխատանքներ կազմակերպելիս շատ կարևոր է առանձին սովորողների գիտելիքների խորացումը, գործնականում գիտելիքները կիրառելու կարողությունը, ինքնուրույն մտածելու, լարված աշխատելու, խոչընդոտներն ու դժվարությունները հաղթահարելու ընդունակությունների ձևավորումը:

Համագործակցային ուսուցումը ներառում է բազմաթիվ հնարքների օգտագործման հնարավորություններ՝ ենթադրելով սովորողների ինքնուրույն մտածողության լայն հեռանկարներ: Նրա ամբողջ նպատակը սովորողների տրամաբանական մտածողության զարգացումն է, որը կրթության համակարգում կարևոր և առաջնային հարց է:

Համագործակցային ուսուցումը հուզական է, և այդ պատճառով էլ այն մեծացնում է սովորողների հետաքրքրությունն ուսուցանվող նյութի նկատմամբ: Դրա առավելությունները հիմնված են լուրջ ուսումնասիրությունների և հետազոտությունների վրա: 1898-1989 թթ. ընթացքում անցկացվել են ավելի քան համեմատական հետազոտություն՝ համագործակցային, անհատական և մրցակցային ուսուցման արդյունավետությունը պարզելու նպատակով: Հետազոտությունները ցույց են տվել, որ համագործակցային ուսուցումը կիրառելի է բոլոր ուսումնական դասընթացներում՝ անկախ տնտեսական, ազգային միջավայրի առանձնահատկություններից և դասակարգել են 3 հիմնական արդյունք՝ բարձր առաջադիմություն և արդյունավետություն, ավելի աջակցող և նվիրված հարաբերություններ, հոգեբանական առողջություն, բանիմացություն և ինքնարժևորման ավելի բարձր աստիճան:

Ուսուցման ընթացքում համագործակցային մեթոդի տարրերի կիրառումը նպաստում է լսարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավոր-

մանը, դասավանդողի կողմից համագործակցային ուսուցման էության առավել խորը ըմբռնմանը և դասի պլանավորմանը, ուսուցման արդյունավետության գնահատմանը և արժևորմանը, ռեֆլեքսային (անդրադարձի) ապահովմանը և խմբային աշխատանքի բարելավմանը:

Անձնակողմնորոշիչ կրթությունը, որպես կրթական նոր հարացույց, մեր իրականության մեջ լուրջ հետազոտության, մշակման և մանկավարժական արդի խնդիրներին համահունչ մեկնաբանության կարիք ունի:

Անձնակողմնորոշիչ ուսուցման մեջ ուշադրության կենտրոնում ձևավորվող անհատի ինքնատիպ, ամբողջական կերտվածք է, որը ձգտում է իր հնարավորությունների առավելագույն իրացմանը, պատրաստակամ է ընդունել նոր փորձը. կարող է կատարել գիտակցված և պատասխանատու ընտրություն կյանքի տարբեր իրավիճակներում:

Անձնակողմնորոշիչ կրթության բովանդակությունը, նրա միջոցներն ու մեթոդները այնպես են կառուցվում, որ սովորողին առարկայական նյութի, նրա ձևի և տեսակների ընտրության հնարավորություն է տրված: Այդ նպատակով կազմվում են անհատական ուսումնական ծրագրեր, որոնք նպաստում են հետազոտական մտքի զարգացմանը:

Անձնակողմնորոշիչ ուսուցման իրականացման ընթացքում սովորողը մշտապես հանդես է գալիս որպես գործող անձ, մասնակից, ոչ թե հանդիսատես, իսկ հաճախ էլ՝ սեփական կրթական գործընթացի նախաձեռնող:

Այսպիսով, անձնակողմնորոշիչ ուսուցման առանցքում դրվում է սովորողի անձը, նրա ինքնատիպությունը, արժեքները, յուրաքանչյուրի սուբյեկտիվ փորձը, որը նախևառաջ բացահայտվում է, ապա համաձայնեցվում կրթության բովանդակության հետ: Եթե կրթության ավանդական փիլիսոփայության մեջ անձի զարգացման սոցիալ-հոգեբանական մոդելները նկարագրվում էին դրսից հանձնարարվող օրինակներով, ապա անձնակողմնորոշիչ ուսուցումը ելնում է սովորողի սուբյեկտիվ փորձի՝ որպես անհատական կենսագործունեության կարևոր աղբյուրի եզակիության ճանաչումից:

Անձնակողմնորոշիչ ուսուցման ուշադրության կենտրոնում գտնվում է լիարժեք ներդաշնակ անձնավորությունը, որը ձգտում է ինքնադրսևորման, պատրաստ է ընդունել նորը, կարող է ընտրություն կատարել կյանքի տարբեր իրավիճակներում և իր ընտրության համար լիարժեք պատասխանատվություն է կրում:

Անձնակողմնորոշիչ ուսուցման ընթացքում էական փոփոխության են ենթարկվում դասավանդող-ուսանող հարաբերությունները: Եթե ավանդական ուսուցման գործընթացում ուսանողը դիտարկվում է որպես օբյեկտ, որին պետք է ուսուցանել, որի մեջ դասավանդողը պետք է «գիտելիքներ լցնի», ապա

անձնակողմնորոշիչ ուսուցումը ուսանողին դիտարկում է որպես սուբյեկտ՝ դասավանդողի գործընկեր, որը սեփական կարծիքի, սխալների, բանավիճելու և այլ իրավունքներ ունի: Ավանդական ուսուցման մեջ գնահատվող լուռ հնազանդ և կատարող ուսանողը այլևս չի կարող դառնալ դասավանդողի գործընկերը: Դասավանդողն էլ ձեռք է բերում նոր գործառույթներ, հրաժարվելով պատրաստի գիտելիք մատակարարողի դերից և ստանձնում ուսուցման համապատասխան պայմաններ ապահովողի, բանիմաց խորհրդատուի և օգնականի դեր: Այսպիսով, եթե ավանդական ուսուցման գործընթացում դասավանդողը կենտրոնական դերում էր, ապա անձնակողմնորոշիչ ուսուցման ընթացքում կենտրոնական դեր են ստանձնում ուսանողները: Դասավանդողի խնդիրն է դառնում աջակցել, ուղղորդել ուսանողներին, նպաստել նրանց մասնակցությանը դասին: Տարբեր ծավալի տեղեկատվության մեխանիկական մտապահման ու բառացի վերարտադրման փոխարեն խրախուսվում է ուսանողների համագործակցային աշխատանքը, միմյանց լսելու, միմյանցից սովորելու կարողություններն ու հմտությունները:

Այսպիսով՝ համառոտ ներկայացնենք անձնակողմնորոշիչ ուսուցման վերաբերյալ մանկավարժական գրականության մեջ եղած մի շարք հիմնադրույթներ.

- սովորողի անձը գտնվում է դասավանդողի ուշադրության կենտրոնում,
- դասավանդող-ուսանող հարաբերություններում գերիշխող է ոչ թե դասավանդողը, այլ ուսանողների գործուն մասնակցությունը ուսուցման գործընթացին և նրանց ինքնուրույն ճանաչողական գործունեությունը,
- դասավանդող-դասագիրք-ուսանող ավանդական հարացույցը փոխարինվում է ուսանող-դասագիրք-դասավանդող նոր հարացույցով:

Անձնակողմնորոշիչ ուսուցման կարևոր առանձնահատկություններն են՝ փոխհաղորդակցության և երկխոսության լայն հնարավորությունը, ուսուցման գործընթացին սովորողի գործուն մասնակցությունը, սովորողին տրամադրվող մեծ ազատությունը՝ ինքնուրույն որոշումներ կայացնելու, ստեղծագործելու, ուսումնական նյութի ընտրության և մի շարք այլ հարցերում:

Ուսանողներին ուսուցողական փորձառությանը նախապատրաստելու նպատակով կիրառվում են իրավիճակային ուսուցման նոր տեսակներ՝ փորձելով յուրացնել մտագրոհը՝ որպես ուսումնական ժամանակակից մեթոդ: Ուսանողների մեջ արթնացնելով անմիջական հետաքրքրություն մանկավարժական գործունեության նկատմամբ՝ նոր մեթոդների կիրառումը հնարավորություն կտա ամրացնելու ինքնուրույն ձեռք բերված գիտելիքները, ձևավորելու հմտություններ՝ կապված մանկավարժական գործունեության հետ: Այս մեթոդի շնորհիվ հեռանում ենք ուղղակի հասկացությունների սահմանումներից, դրանց

մեխանիկական յուրացումից և հնարավորություն ենք տալիս ուսանողներին ինքնուրույն մտահանգումներ կատարելու և յուրացնելու նյութը՝ կապելով այն անմիջական փորձի, խնդիրների կազմման և ինքնուրույն լուծման ուղիների որոնման հետ: Ուսանողների փորձառության նախապատրաստման նպատակները և խնդիրները հիմնականում տրվում են պատրաստի գիտելիքների ձևով: Ուսանողը հնարավորություն չունի դրանք վերլուծելու, հասկանալու և յուրացնելու փոխներգործուն մեթոդներով: Նա այդ տվյալներն ընդունում է առանց փորձի և ապացույցների: Մեր նպատակն է ուսանողներին հնարավորություն տալ գործուն որոնումների, բանավեճերի, ինքնուրույն աշխատանքի միջոցով անել համապատասխան եզրակացություններ:

Փորձառությունը հնարավորություն է տալիս ուսանողներին՝գործնական ճանապարհով կիրառելու ստացված գիտելիքների համակարգը, ստուգելու դրանց արդիականությունը, ի վերջո, կառուցելու նոր գիտելիքների համակարգ, որը կազդի նրանց աշխարհայացքի վրա:

Նոր մոտեցումների կիրառումը ընկած է իրավիճակային ուսուցման հիմքում: Դեպքի նկարագրությունը ոչ միայն ակտիվացնում է ուսանողներին, այլև հնարավորություն է տալիս իրականացնելու գործնական աշխատանքներ, որոնք հանգեցնում են նրանց վերլուծական և հաղորդակցական ընդունակությունների զարգացմանը: Նրանց վիճակվում է «դեմ առ դեմ» մնալ իրադրության հետ և ինքնուրույն գտնել դրանց լուծման ուղիները:

Մտագրոհի մեթոդի և դեպքի հետազոտման կիրառումը գործնական հմտություններ ձեռք բերելու նախապատրաստման կարևոր միջոց է: Այն թույլ է տալիս ուսանողներին՝ շատ արագ կողմնորոշվելու իրադրության մեջ, հասկանալու, վերլուծելու և ընդհանրացումներ կատարելու:

Նման մոտեցումը հնարավորություն է տալիս նաև նոր մակարդակի բարձրացնելու առկա իրադրության ընկալման գործընթացը և համապատասխան դիրքորոշումներ ձևավորելու ուսուցանվող առարկայի նկատմամբ:

Այսպիսով, ակնհայտ է, որ դեպքի նկարագրությունը մտագրոհի մեթոդի ուսուցման նպատակով, ունի մի շարք առավելություններ. ուսանողները ձեռք են բերում հիմնախնդրի իրական լուծման հմտություններ, թիմում աշխատելու հմտություններ, ինքնուրույն, ստեղծագործաբար մտածելու կարողություն և այլն: Մտագրոհը ուսուցման հարաբերականորեն նոր և արդյունավետ մեթոդներից է, որը հնարավորություն է տալիս մարդուն՝ արտահայտելու մտքեր, (նույնիսկ ամենաանհեթեթ), և կարծիքներ, ինչը կարող է նպաստել ամենադժվար հիմնահարցի լուծմանը: Այդ կերպ հնարավոր է դառնում հարստացնել ունեցած գիտելիքները, արժևորել դրանք, ստանալ խորհուրդ, պատկերացում կազմել սեփական գիտելիքների մասին: Այս ռազմավարությունը կիրառվում է

ուսանողների կուտակած նախկին գիտելիքներն ակտիվացնելու նպատակով: Մինչև կարդալ սկսելը ուսանողները վերհիշում են, թե ինչ գիտեն այդ մասին: Այն գործողությունները, որոնք օգնում են նրանց ակտիվացնելու իմացածը՝ թեմայի յուրացումը խթանելու հիանալի մեթոդներ են: Նոր նյութի յուրացման հաջողությունը մեծապես պայմանավորված է այն գիտելիքներով ու փորձառությամբ, որոնք ուսանողներն իրենց հետ բերում են բուհ:

Ստեղծագործական մտքի զարգացման առանձնահատկությունները, դրանց հետևողականությունը, նախապատրաստումը, նորի առաջադրումը, իմաստավորումը և այլ գործընթացներ նկարագրված են դեռևս Տացիտի (մոտավորապես 58-117 թթ.) ժամանակներից: Սակայն այս մեթոդի ավելի խոր ուսումնասիրությունը կատարվել է ԱՄՆ-ում, 30-ական թվականների վերջին: Չնավորվել է 40 -ական թվականներին և իր վերջնական տեսքն է ստացել 1953թ. Ա.Օսբորնի «Ղեկավարվող երևակայություն» աշխատության մեջ, որտեղ ներկայացված է մտագրոհի կազմակերպման սկզբունքները և ստեղծագործական մտածողության գործընթացը:

Այս մեթոդն ունի շատ պարզ կառուցվածք և բաղկացած է երկու փուլից: Այդ փուլերում առաջարկվում են նոր մտքեր, այնուհետև այդ մտքերը հստակեցվում և զարգացվում են:

Մարդու ուղեղին բնորոշ են երկու կարևոր կողմեր՝ ստեղծագործական միտք և վերլուծական մտածողություն, և դրանց համագործակցությունը կազմում է ստեղծագործական աշխատանքի սկիզբը: Ըստ մտագրոհի մեթոդի արգելվում է քննադատությունը: Առաջարկվող գաղափարների թիվը պետք է, որքան կարելի է, ավելի մեծ լինի և բոլոր առաջարկվող մտքերը՝ ներառյալ անիրականանալիները և երևակայականը, խրախուսվում են: Մտագրոհի նպատակն է՝ որոնել կողմնորոշման հնչքան հնարավոր է շատ հիմքեր և ճանապարհներ՝ առաջարկվա:ծ խնդիրների լուծման համար: Մտագրոհը որպես մեթոդ կարելի է սահմանել իբրև լուծվող խնդրի այլընտրանքային ուղղությունների առաջադրում խմբի կողմից, որը կարող է հարաբերականորեն գնահատել և զարգացնել նրա մեջ թաքնված հնարավորությունները: Պետք է նշել, որ մտագրոհը ոչ թե հիմնախնդրի լուծման, այլ դրա այլընտրանքային լուծման ուղղությունների որոնման մեթոդ է:

Գրականություն

1. Վարդումյան Ս., Հարությունյան Լ., Ջաղինյան Ն. և Վարելլա Գ., ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: «Նոյյան Տապան», Երևան, 2005թ.:
2. Շահվերդյան Մ., Համատեղ գործունեության կազմակերպման առանձնահատկությունները ուսուցման պրոցեսում: Վանաձոր, 2005թ.:
3. Պետրովսկի Ա.Վ., Տարիքային և մանկավարժական հոգեբանություն: Երևան,1977 թ.:
4. Панин А.А., Личностно-ориентированное образование: история и практика. Москва, 2003 г.
5. Якиманская И.С. Личностноориентированное обучение в современной школе, М. 2000 г.